

տուրփունս՝ սակաւ մարդիկ են յԱրեաց աշխարհիս, որ կարեն ասել ըստ արժանի գովութեան յայրն եւ ի նորա արարած. եւ դուք ձերով անպիտան եւ վնասակար ուսմամբ թշուառացուցեալ կորուսեք զայնպիսի այր: 3 Եւ յայնպիսի աշխարհի հեղան անթիւ արիւնք բազում¹ Արեաց եւ անարեաց: 4 Եւ արդ՝ ոչ կարեք արդեալք ձեզէն ձերոյին անձանցդ գտանել հնարս մահու եւ վճարիլ ի բարերար լուսոյն, զոր անարժանութեամբ եւ ոչ իրաւացի տեսնեք այսաւր, քան թէ սաստիկ եւ ըստ արժանի ձերոց գործոցդ պատահեալ բազում տանջանաց վատամահ լինիք»:

5 Եւ լուեալ զայս ամենայն խաւսս սպառնալիցս² եւ զբանս պատուհասալիցս զչարաթոյն հազարապետին Արեաց Միհրնէրսեհի, եւ զամենայն դրան աւագանւոյն՝ յառաջ կացեալ այրն Աստուծոյ Ղեւոնդ ետ պատասխանի եւ ասէ. «Սոքա ամենեքեան, որ կանս ի հարցմանս առաջի իշխանութեանդ ձերոյ, ընդ որս դուք³ զբանս երկարեալ խաւսիք, ըստ աւրինաց մերոց եւ ըստ աստուածատուր հրամանի կարգադրութեան եկեղեցւոյ՝ որոշութիւն ունին ըստ քահանայութեան պատուոյ»: 6 Եւ ծանուցանելով զմի մի ի սրբոց՝ ցուցանէր նոցա զիւրաքանչիւր ոք, թէ ո՛ր ոք է, եւ կամ զի՛նչ է անուն ուրուք նոցա, եւ թէ ո՛րպիսի աստիճանաւ ըստ քրիստոնէական կարգի պատուեալ է: 7 Քանզի թեպէտ եւ⁴ ըստ համբաւոյ լուեալ էր նոցա զանուանս սրբոցն եւ զգործ զիւրաքանչիւր ուրուք, զոր⁵ գործեալ էր յաշխարհին Յայոց՝ սակայն եւ անձանաւթ էին անուանք սրբոցն, եւ ըստ քրիստոնէութեան աւծմանն անտեղեակ էին իւրաքանչիւր պատուոյ: 8 Եւ զսրբոյն Յովսէփայ ասէր. «Չսա զոր տեսանէքս, թեպէտ եւ մանկագոյն քան զիս տեսանէք տիովք⁶, այլ պատուով կարգեալ է արժանաւորապէս, եւ զլուիս է ամենայն Յայոց քահանայութեանց»: 9 Եւ զսուրբն Սահակ ցուցեալ ասէր. «Սա զկարգ աւծման ըստ ճշմարիտ եւ արդարեւ⁷ քրիստոսատուր ձեռնադրութեան մերոյ աւրինաց՝ զկատարեալն ունի. իսկ այլքս եւ ես միապէս եմք ըստ կարգի քահանայութեանն: 10 Իսկ թէ եւ ոք նուազ հաղորդելով այսմ ժամուս, մանաւանդ դիպելով եւս ինդրոյ կատարելութեան եւ գտցի արժանի, եւ մեծ եւս է այնպիսին յաննախանձ արքայութեանն Աստուծոյ. եւ ոչ է իմ բանս՝ այլ որ արարիչն է մեր եւ վարդապետ՝ նա ասաց, թէ *Որ ախորժե-*

1 ՏՏ. արիւնք եւ բազում

2 Ձ. սպառնալից

3 ՏՏ. ընդ որս եւ դուք

4 ՏՏ. քանզի եւ թեպէտ

5 Ձ. չիք զոր

6 ՏՏ. տիօք

7 Ձ. արդար